Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 12-02-2021 թ. որոշմամբ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ Փ. 5 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.916939 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2016-07-14 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 00156064 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)60655885 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | vwfa.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@vwfa.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Զարուհի Մուրադյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 11 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ծրագրի անվանումը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում «ՀՀ խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում | 43265000 |
| | Առկա կոլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում, տնկարկների մշակում, կոլեկցիոն այգու լրացում, նոր սորտերի ներուժի բացահայտում | 18116800 |

| | | |
|---|---|---|
| | Կոլեկցիոն այգու սորտերի գինեգործական ներուժի հետազոտում | 1400000 |
| | Տեղական սորտերի վիրուսազերծ շտեմարանի ստեղծում | 4377100 |
| | Տեխնիկական, մասնագիտական աջակցություն ՀՀ խաղողագինեգործական շրջաններում գինեգործությամբ զբաղվող տնային տնտեսություններին | 1750000 |
| | Պրովայն Դյուսելդորֆ 2021թ. ցուցահանդեսի մասնակցություն | 16385550 |
| | Միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանը միտված միջոցառումների իրականացում | 32043912 |
| | Տեղական շուկայում հայկական գինեգործության հանրահռչակմանն ու երկրում գինու մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումներ | 13500000 |
| | Հայաստանի գինու տուրիզմի ուղեցույցի տպագրություն | 1048175 |
| | Կանոնադրական նպատակների համար | 105812415 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կանոնադրական նպատակների համար | 4135000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում «ՀՀ խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում | 43265000 | |
| Առկա կոլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում, տնկարկների մշակում, կոլեկցիոն այգու լրացում, նոր սորտերի ներուժի բացահայտում | 18116800 | |

| | |
|---|---|
| Կոլեկցիոն այգու սորտերի գինեգործական ներուժի հետազոտում | 1400000 |
| Տեղական սորտերի վիրուսազերծ շտեմարանի ստեղծում | 4377100 |
| Տեխնիկական, մասնագիտական աջակցություն ՀՀ խաղողագինեգործական շրջաններում գինեգործությամբ զբաղվող տնային տնտեսություններին | 1750000 |
| Պրովայն Դյուսելդորֆ 2021թ. ցուցահանդեսի մասնակցություն | 16385550 |
| Միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանը միտված միջոցառումների իրականացում | 32043912 |
| Տեղական շուկայում հայկական գինեգործության հանրահռչակմանն ու երկրում գինու մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումներ | 13500000 |
| Հայաստանի գինու տուրիզմի ուղեցույցի տպագրություն | 1048175 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 237698952 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 131886537 |

**Նշումներ՝**

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
Digitally signed by SARGSYAN LILIT 5211930223
Date: 2021.06.24 14:13:48 AMT
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| (Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով) | Ծանոթագր. | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 8,575 | 11,283 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 29 | 73 |
| *Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ* | | *8,604* | *11,356* |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Ապրանքանյութական պաշարներ | 6 | 373 | 544 |
| Դեբիտորական պարտքեր | 7 | 65 | 57 |
| Տրված կանխավճարներ | 7 | 11 | 11 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 40,732 | 32,306 |
| *Ընդամենը ընթացիկ ակտիվներ* | | *41,181* | *32,918* |
| **Ընդամենը ակտիվներ** | | **49,785** | **44,274** |
| **Կապիտալ և պարտավորություններ** | | | |
| **Կապիտալ** | | | |
| Կուտակված շահույթ | | - | - |
| | | - | - |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | - | - |
| **Պարտավորություններ** | | | |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 9 | 8,575 | 11,283 |
| *Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ* | | *8,575* | *11,283* |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 7 | 344 | 3,872 |
| Ստացված կանխավճար | 7 | 32 | 32 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 9 | 36,069 | 27,853 |
| Արձակուրդային վճարների պահուստ | 10 | 4,765 | 1,234 |
| *Ընդամենը ընթացիկ պարտավորություններ* | | *41,210* | *32,991* |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **49,785** | **44,274** |
| **Ընդամենը կապիտալ և պարտավորություններ** | | **49,785** | **44,274** |

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրենի
Զարուհի Մուրադյան

Գլխավոր հաշվապահ
Սոնա Մարկոսյան

14 մայիսի, 2021 թ.

Գ.Տ.

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| (Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով) | Ծանո-թագր. | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| **Եկամուտներ** | | | |
| Եկամուտ ճանաչված շնորհներ | 11 | 239,315 | 345,767 |
| Այլ եկամուտներ | 12 | 3,735 | 692 |
| **Ընդամենը եկամուտներ** | | **243,050** | **346,459** |
| **Ծախսեր** | | | |
| Իրականացված ծրագրեր | 15 | (131,237) | (229,755) |
| Կառավարման և վարչական ծախսեր | 13 | (105,825) | (116,057) |
| Այլ ծախսեր | 14 | (6,650) | (1,489) |
| **Ընդամենը ծախսեր** | | **(243,712)** | **(347,301)** |
| **Զուտ եկամուտ (վնաս)** | | **(662)** | **(842)** |
| Ֆինանսական եկամուտներ | 16 | 812 | 989 |
| Ֆինանսական ծախսեր | | - | - |
| **Ֆինանսական գործունեության արդյունք** | | **812** | **989** |
| **Տարվա զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկը** | | **150** | **147** |
| Շահութահարկ | | (150) | (147) |
| **Տարվա զուտ շահույթ (վնաս)** | | - | - |

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Զարուհի Մուրադյան

Գլխավոր հաշվապահ
Սոնա Մարկոսյան

14 մայիսի, 2021 թ.

Կ.Տ.

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների Խորհրդին

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

**«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ**

**14 մայիսի, 2021 թ.**

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՎԱՆԳՈՒՄ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
JOINT VENTURE LIMITED LIABILITY COMPANY "LONDON BUSINESS GROUP" 01223655
«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ»
«N16»

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2021 14:13